ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՎԱՐԴՈՒՀ ԵՍԱՅԱՆ

Քաղաքացիական գործերը ժամանակին քննելը և լուծելը քաղաքացիական դատավարության հիմնական խնդիրներից են[1]: Բացի այդ, գործին մասնակցող անձանց համար կարևոր են ոչ միայն իրենց իրավունքների և օրենքով պահպանվող շահերի պաշտպանությունը, այլ նաև դա ողջամիտ ժամկետներում իրականացնելը:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, ունի անկախ ու անաչառ դատարանի կողմից **ողջամիտ ժամկետում** արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: Նույնը ամրագրված է նաև 2015 թ. Սահմանադրության 63-րդ հոդվածում:

Դատավարական ժամկետները նպաստում են դատական քաշքշուկի բացառմանը, դատավարական իրավահարաբերությունների կայունությանը, հստակությանը և որոշակիությանը, որոնք վերջին հաշվով ապահովում են դատարան դիմող քաղաքացիների և կազմակերպությունների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն ու երաշխավորվածությունը, մի խոսքով՝ արդարադատության իրականացման արդյունավետությունը[2]:

Դատավարության մասնակիցների՝ դատարանի, գործին մասնակցող անձանց և դատավարության մյուս մասնակիցների գործողությունները պետք է կատարվեն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ սահմանված որոշակի դատավարական կարգով, որով էլ որոշվում են յուրաքանչյուր գործողության իրականացման կարգը, ձևը, վայրը և ժամանակը:

Դատավարական ժամկետները (կամ դատավարական գործողություններ կատարելու ժամանակահատվածը) քաղաքացիական դա-

---

[1] Տե՛ս «Гражданский процесс». Учебник, 8-е изд., М., Берлин: «Инфотропик Медиа», 2012, էջ 119:

[2] Տե՛ս **Ռ. Գ. Պետրոսյան**, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարություն, Եր., «Ոսկան Երևանցի», 2012, էջ 193:

տավարական ձևի բովանդակության մի մասն են:

Քաղաքացիական դատավարությունը՝ որպես դատարանի և դատավարության մյուս մասնակիցների գործունեության էություն, անհրաժեշտություն է առաջացնում որոշել այդ գործողություններն իրականացնելու և կարգավորելու ժամանակային սահմաններ: Հարկ է նկատել, որ յուրաքանչյուր դատավարական գործողություն իրականացվում է կա՛մ օրենքով սահմանված, կա՛մ դատարանի կողմից նշանակված, կա՛մ էլ ողջամիտ ժամկետներում:

Դատավարական օրենսդրությունը չի տալիս դատավարական ժամկետի բնորոշումը: Այն կարելի է դիտարկել որպես օրենքով սահմանված կամ դատարանի կողմից նշանակված որոշակի ժամանակամիջոց, որի ընթացքում դատավարության մասնակիցները իրականացնում են դատավարական գործողություններ և կատարում դատավարական պարտականություններ:

Դատավարական ժամկետները սահմանվում են դատարանի, կողմերի և դատավարության մյուս մասնակիցների համար, որպեսզի իրականացվեն դատավարական որոշ գործողություններ, որոնցից յուրաքանչյուրը սահմանափակվում է որոշակի ժամկետով, իսկ ժամկետների սահմանումը և պահպանումը իրավական որոշակիության սկզբունքի պահպանման երաշխիք են: Եվ վերջիվերջո, ինչպես արդեն նշվեց, դատավարական ժամկետների սահմանումը անհրաժեշտ է, որպեսզի կողմերը չչարաշահեն իրենց դատավարական իրավունքները, ինչպես նաև նյութական իրավահարաբերություններին որոշակիություն և հստակություն հաղորդեն:

Այսպիսով, դատավարական ժամկետը օրենքով սահմանված կամ դատարանի կողմից նշանակված որոշակի ժամանակամիջոցն է, որի ընթացքում դատարանը, գործին մասնակցող անձինք և դատավարության մյուս մասնակիցները իրավունք ունեն կամ պարտավոր են իրականացնել որոշակի դատավարական գործողություններ:

Ինչպես գիտենք, քաղաքացիական դատավարության հիմնական խնդիրը ոչ թե քաղաքացիական գործի արագ, այլ ճիշտ և ժամանակին, այսինքն՝ օրենքով սահմանված դատավարական ժամկետներում քննելն ու լուծելն է[3]:

Այս դեպքում դատավարական ժամկետների ինստիտուտը ուղղված է ոչ միայն դատավարության կարգավորմանը և արագ ու արդար դատաքննություն ապահովելուն, այլև, որպես հետևանք, իրականացնում է քաղաքացիական դատավարության հիմնական խնդիրը:

Քանի որ «ժամկետ» եզրույթը լայնորեն կիրառվում է նաև նյութա-

---

[3] Տե՛ս **Викут М. А., Зайцев И. М**. Гражданский процесс России. М.: «Юрист», 1999, էջ 144:

կան իրավունքի ճյուղերում (քաղաքացիական, ընտանեկան, աշխատանքային իրավունքում և այլն), անհրաժեշտ է առանձնացնել հենց դատավարական ժամկետների տարբերակման հիմք հանդիսացող հատկանիշները, որոնք հնարավորություն են տալիս դրանք տարբերակելու այն ժամկետներից, որոնց օրենսդիրը տալիս է իրավաբանական նշանակություն: Այսպես, դատավարական ժամկետների գլխավոր առանձնահատկությունն այն է, որ դրանք սահմանում են հենց դատավարական գործողության իրականացման ժամանակահատվածը (պահերը): Դատավարական ժամկետները չեն կարող ազդել նյութական վիճելի իրավահարաբերության բովանդակության վրա: Դատավարական ժամկետները գործում են հենց դատավարական իրավահարաբերություններում՝ սահմանելով այն ժամանակահատվածը, երբ պետք է իրականացվեն նյութաիրավական պարտավորությունները:

Անհրաժեշտ է դատավարական ժամկետները տարբերակել նաև հայցային վաղեմության ժամկետից: Ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331-րդ հոդվածի՝ հայցային վաղեմություն է համարվում իրավունքը խախտված անձի հայցով իրավունքի պաշտպանության ժամանակահատվածը: Ընդ որում, հայցային վաղեմության ժամկետի լրանալը, որի կիրառման պահանջով դիմել է վիճող կողմը, հիմք է դատարանի կողմից հայցը մերժելու մասին վճիռ կայացնելու համար (ՀՀ ՔՕ 335 հոդվ.): Կարելի՞ է արդյոք ենթադրել, որ նշված նորմի առկայությունը հիմք է տալիս հայցային վաղեմության ժամկետը նույնացնել դատավարական ժամկետի հետ: Կարծում ենք՝ ոչ: Հայցային վաղեմության ժամկետը դատարանին դատավարական գործողություններ իրականացնելու համար չի սահմանում որևէ ժամանակահատված: Հայցային վաղեմության ժամկետը հիմք է (եթե վիճող կողմը դիմել է հայցային վաղեմության ժամկետ կիրառելու մասին) հայցը մերժելու համար: Այս իմաստով հայցային վաղեմության ժամկետը շատ քիչ է տարբերվում պատասխանողի նյութաիրավական այլ առարկություններից, որոնք ևս կարող էին հիմք լինել հայցապահանջը բավարարելը մերժելու համար[4]:

Սահմանելով դատավարական ժամկետներ՝ դրանք ստանում են հանրային իրավական բնույթ, այսինքն՝ դատավարական ժամկետները սահմանվում են կա՛մ օրենքով, կա՛մ դատարանի կողմից (ՀՀ ՔԴՕ 114-րդ հոդվ. 1-ին մաս) և՝ համապատասխանաբար արդարադատություն իրականացնող դատարանը, գործին մասնակցող անձինք և դատավարության մյուս մասնակիցները իրավասու չեն իրենց համաձայնութ-

[4] Ուշագրավ է, որ հայցային վաղեմությունը ռոմանագերմանական իրավական համակարգի երկրներում կիրառվում է որպես նյութական իրավունքի ինստիտուտ, իսկ անգլիական և ամերիկյան համակարգի երկրներում՝ որպես դատավարական իրավունքի ինստիտուտ:

յամբ փոփոխելու դատավարական ժամկետը:

Դատավարագիտության մեջ դատավարական ժամկետները ավանդաբար դասակարգվում են տարբեր հիմքերով: Ելնելով սահմանման ձևից՝ կա դատավարական ժամկետների 2 տեսակ՝

- օրենքով սահմանված ժամկետներ (կամ, այսպես կոչված, օրինական ժամկետներ),
- դատարանի կողմից նշանակված ժամկետներ (կամ դատական ժամկետներ):

ՀՀ ՔԴՕ 114-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավարական ժամկետները սահմանվում են քաղաքացիական դատավարության օրենսգրքով, այլ օրենքներով, իսկ օրենքով սահմանված չլինելու դեպքում՝ դատարանի կողմից:

Օրենքով սահմանված ժամկետները նախատեսված ժամկետներ են ՔԴՕ և այլ օրենքների նորմերով, որոնք, անկախ քաղաքացիական դատավարության սուբյեկտների կամքից, ենթակա չեն փոփոխման՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի: Դրանց թվին են դասվում հայցադիմումը վարույթ ընդունելու (հոդվ. 125, 2-րդ մաս), նախնական դատական նիստ նշանակելու (հոդվ. 166, 2-րդ մաս), վճիռը հրապարակելու կամ վճռի օրինակը ԳՄ անձանց ուղարկելու (հոդվ. 179), լրացուցիչ վճիռ կայացնելու (հոդվ. 196, 5-րդ մաս), քաղաքացուն հոգեբուժական կազմակերպությունում ոչ հոժարակամ հոսպիտալացման ենթարկելու վերաբերյալ գործի քննության (հոդվ. 269, 1-ին մաս) ժամկետները և այլն:

Դատավարական օրենսդրությամբ նախատեսված դատավարական ժամկետներն էլ իրենց հերթին են բաժանվում տեսակների, մասնավորապես՝ 1. քաղաքացիական գործերի քննության ժամկետներ և 2. առանձին դատավարական գործողությունների կատարման ժամկետներ:

Այսպես, ՔԴՕ 303-րդ հոդածով նախատեսված հիմքերի առկայության դեպքում դատարանը իրավունք ունի կիրառելու արագացված դատաքննություն: Նման որոշում կայացնելու պահից առաջին ատյանի դատարանն անցնում է եզրափակիչ դատական ակտի կայացմանը (ՔԴՕ 305-րդ հոդվ., 1-ին մաս), կամ դատարանը կորցրած արժեթղթով հավաստված իրավունքը վերականգնելու վերաբերյալ գործը քննում է հաղորդագրության հրապարակման օրվանից երկու ամիս անցնելուց հետո (ՔԴՕ 281-րդ հոդվ.):

Քաղաքացիական մի շարք գործերի քննության համար օրենքը սահմանում է նաև ավելի սեղմ ժամկետներ: Օրինակ՝ քաղաքացուն հոգեբուժական կազմակերպություն ոչ հոժարակամ հոսպիտալացնելու վերաբերյալ գործը վարույթ ընդունելու հարցը առաջին ատյանի դատարանը լուծում է մեկ օրվա ընթացքում և դիմումի քննության հա-

մար դատական նիստը նշանակում է դիմումը վարույթ ընդունելու օրվանից հինգ օրվա ընթացքում (ՔԴՕ 269-րդ հոդվ., 1-ին մաս), արտոնագրված հաշտարարի մասնակցությամբ արտադատական կարգով կնքված հաշտության համաձայնությունը հաստատելու վերաբերյալ դիմումը դատարանը քննում է առանց դատական նիստ հրավիրելու և վճիռ է կայացնում դիմումը ստանալուց հետո յոթօրյա ժամկետում (ՔԴՕ 290-րդ հոդվ.), վճարման կարգադրություն արձակելու մասին դիմումը՝ այն ստանալու օրվանից հետո՝ երկշաբաթյա ժամկետում (ՔԴՕ 311-րդ հոդվ.), վերաքննիչ դատարանն առաջին ատյանի դատարանի միջանկյալ դատական ակտերի կամ վճարման կարգադրության դեմ ներկայացված վերաքննիչ բողոքները քննում և որոշում է կայացնում վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում (ՔԴՕ 377-րդ հոդվ.) և այլն:

Օրենքով սահմանված դատավարական ժամկետները պարտադիր են ինչպես դատարանի, այնպես էլ դատավարության այլ մասնակիցների համար համապատասխան դատավարական գործողություններ իրականացնելիս[5]:

Որպես կանոն՝ օրենքով սահմանված դատավարական ժամկետները ենթակա չեն երկարաձգման[6], դրանք կարող են միայն վերականգնվել:

Դատավարական ժամկետներ կարող է սահմանել նաև դատարանը: Այսպես, գործին մասնակցող անձանց համար դատարանը կարող է սահմանել ժամկետներ, օրինակ՝ գործի քննության հետաձգման դեպքում, երբ դատարանը կայացնում է պատճառաբանված որոշում՝ դրանում նշելով հաջորդ դատական նիստի ժամանակը և վայրը (ՔԴՕ 156 -րդ հոդված), ապացույցները ներկայացնելու համար ժամկետ սահմանելով (ՔԴՕ 167-րդ հոդվածի 9-րդ կետ) և այլն: Դատարանը ժամկետները սահմանում է հաշվի առնելով ողջամտության սահմանները: ՀՀ ՔԴՕ-ում, ասվում է, որ դատարանն առաձին դատավարական գործողությունների կատարման ժամկետներ սահմանելիս հաշվի է առնում այդ դատավարական գործողության կատարման համար անհրաժեշտ և բավարար ժամանակահատվածը (ՔԴՕ 114-րդ հոդվածի 2-րդ մաս):

Այսինքն՝ գործող օրենսդրությամբ դատարանն առանձին գործողությունների կատարման ժամկետներ սահմանելիս հաշվի է առնում այդ դատավարական գործողության համար անհրաժեշտ **ողջամիտ**

---

[5] Տե՛ս «Гражданский процесс». Учебник для вузов. М., 2014, էջ 210:

[6] Որպես բացառություն կարելի է նշել հայցադիմումի պատասխանի համար նշված ժամկետի սահմանումը: Գործող օրենսդրությամբ պատասխանողը հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, դատարան է ներկայացնում հայցադիմումի պատասխան: Սակայն, ելնելով գործի առանձնահատկություններից, դատարանը կարող է պատասխանողի միջնորդությամբ երկարաձգել պատասխան ներկայացնելու ժամկետը (ՔԴՕ 139- հոդվ. 1-ին մաս):

ժամանակահատվածը: Ինչպես արդեն նշվեց, ողջամիտ ժամկետներում գործի քննության պահանջը բխում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի և ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի, ինչպես նաև «Դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 9-րդ հոդվածի բովանդակությունից:

Ողջամիտ ժամկետի բնորոշում չկա ո՛չ միջազգային ակտերով, ո՛չ էլ ՀՀ օրենսդրությամբ, սակայն դրա տակ հասկացվում է դատաքննության կամ դատական ակտի կատարման համար նախատեսված այն ժամանակահատվածը, որը երաշխավորում է շահագրգիռ անձանց իրավունքների և օրինական շահերի իրական պաշտպանությունը[7]:

Բացի այդ, ողջամիտ ժամկետում գործի քննությունը ենթադրում է օպտիմալ հավասարակշռություն դատավարության ընթացքի և դատական ակտի օրինականության ու հիմնավորվածության միջև:

Եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում բազմիցս նշել է, որ այս երաշխիքի նպատակն է դատական քննության բոլոր մասնակիցների պաշտպանությունը դատաքննության անհարկի ձգձգումներից, որոնք կարող են խափանել արդարադատության արդյունավետությունը և վստահությունը վերջինիս նկատմամբ:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն իր հանձնարարականում, որը, ի դեպ, ընդունվել էր Իտալիայում ձևավորված քաղաքացիական գործերի քննության ողջամիտ ժամկետների խախտման պրակտիկայի կապակցությամբ, ընդգծել է, որ արդարադատության իրականացման չափազանց ձգձգումը լուրջ վտանգ է իրավունքի գերակայության համար[8]:

Եվրոպական դատարանը մշակել է այն չափանիշները, որոնցով պետք է առաջնորդվեն պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները ժամկետների ողջամտությունը գնահատելիս: Դրանք են՝ 1) գործի բարդությունը, 2) Եվրոպական դատարան դիմած անձի, ինչպես նաև պետաիշխանական մարմինների վարքագիծը, որոնց պատճառով ձգձգվել է քննությունը, 3) դիմողի համար դատաքննության առարկա հանդիսացող արժեքի կարևորությունը[9]:

ՀՀ Վճռաբեկ դատարանը ևս մի շարք գործերով կայացված որոշումների շրջանակներում արձանագրել է, որ գործը ողջամիտ ժամկե-

---

[7] Տե՛ս «Гражданский процесс». М., 2014 էջ 206:

[8] Տե՛ս «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» 1950 թ. եվրոպական կոնվենցիայի մեկնաբանություն: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունք, գիտ. խմբ. Գ. Գ. Հարությունյան, Եր., «Տիգրան Մեծ», 2005, էջ 212:

[9] Տե՛ս **Моул Н., Харби К., Алексеева Л. Б**. Европейская Конвенция о защите прав человека и основных свобод. Статья 6. Право на справедливое судебное разбирательство. Прецеденты и комментарии. М., 2001, էջ 38-48:

տում քննելը «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով և ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր է, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից:

Ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքը՝ որպես արդար դատաքննության իրավունքի օրգանական տարր, ՀՀ օրենսդրական համակարգ ներմուծվեց 2005 թ. սահմանադրական բարեփոխումների արդյունքում, որից հետո ՀՀ ԴՆԽ-ն 2006 թ. թիվ 98 որոշմամբ արձանագրեց, որ դատական պրակտիկայում հանդիպում են դեպքեր, երբ գործերի քննության ողջամիտ ժամկետները խախտվում են դատարանների կողմից տարբեր պատճառներով: Միաժամանակ որոշեց, որ գործի քննությունը պետք է իրականացվի հնարավոր սեղմ ժամկետում: Օրինակ՝ քաղաքացիական գործերով գործի քննությունը պետք է ավարտվի մեկ դատական նիստի ընթացքում, եթե չկան ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված բացառիկ դեպքեր՝ գործի քննությունը հետաձգելու համար[10]: Ուստի 2018 թվականին ընդունված «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 9-րդ հոդվածը որպես իրավական երաշխիք սահմանում է, որ գործի քննությունը և լուծումը պետք է իրականացվեն ողջամիտ ժամկետում: Դատարանում գործի քննության տևողության ողջամտությունը որոշելիս հաշվի են առնվում՝ 1) գործի հանգամանքները, ներառյալ՝ իրավական և փաստական բարդությունը, վարույթի մասնակիցների վարքագիծը և վարույթի մասնակցի համար գործի տևական քննության հետևանքները, 2) հնարավոր սեղմ ժամկետում գործի քննությունն ու լուծումն իրականացնելու նպատակով դատարանի կատարած գործողությունները և դրանց արդյունավետությունը, 3) գործի քննության ընդհանուր տևողությունը, 4) Բարձրագույն դատական խորհրդի սահմանած՝ գործի քննության միջին ուղենիշային տևողությունը: Նույն հոդվածի 3-րդ մասը նշում է, որ եթե գործի քննության և լուծման համար օրենքով սահմանված է հատուկ ժամկետ, ապա այն պետք է քննվի և լուծվի այդ ժամկետում: Սա վերաբերում է արդեն առանձին գործերի քննության և լուծման համար սահմանված հատուկ ժամկետներին (հատուկ հայցային վարույթի կարգով քննվող աշխատանքային վեճեր, ՀՀ անօրինական տեղափոխված կամ ՀՀ-ում ապօրինի պահվող երեխայի վերադարձի վերաբերյալ գործեր, պարզեցված վարույթ, վերաքննիչ վարույթ, արբիտրաժի և ֆինանսական հաշտարարության հետ կապված վարույթներ և այլն):

[10] Տե՛ս ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 13.06.2006 թ. թիվ 98 որոշումը:

Դատարանի կողմից սահմանվող ժամկետները նշանակում է դատարանը իր հայեցողությամբ: Այս տեսակին են պատկանում այն ժամկետները, որոնք՝ 1) սահմանված չեն օրենքով, 2) որոշվում են ելնելով գործի հանգամանքներից և 3) որոշվում են դատարանի կողմից:

Ժամկետ սահմանելու համար, որի ընթացքում պետք է իրականացվեն որոշակի դատավարական գործողություններ, դատարանը պետք է ելնի գործի փաստական հանգամանքներից: Այդ ժամանակահատվածը պետք է բավարար լինի դատավարական գործողություններ իրականացնելու համար, բայց միևնույն ժամանակ չպետք է խոչընդոտի գործի արդար և ժամանակին քննությունը: Դատարանի կողմից սահմանվող ժամկետներին է վերաբերում, օրինակ, ապացույցները ներկայացնելու՝ դատարանի կողմից որոշվող ժամկետը (ՔԴՕ 64-րդ հոդվ. 4-րդ մաս. 3-րդ կետ) և այլն:

Ելնելով սուբյեկտային կազմից, որոնց հասցեագրված են դատավարական ժամկետները, դրանք կարելի է դասակարգել 3 խմբի:

- **Դատարանի համար նախատեսված դատավարական ժամկետները** միշտ սահմանվում են օրենքով և ներառում են դատարանի կողմից տարբեր փուլերում իրականացվող գործողությունները: Այսպես օրինակ՝ հայցի ապահովման մասին միջնորդությունը դատարանը քննում է առանց դատական նիստ հրավիրելու՝ ոչ ուշ, քան այն ստանալու հաջորդ օրը… (ՔԴՕ 131-րդ հոդվ.), նախնական դատական նիստ պետք է հրավիրվի այն նշանակելու մասին որոշման կայացմանը հաջորդող երեսնօրյա ժամկետում (ՔԴՕ 166-րդ հոդվ.), հայցադիմումը ներկայացվելուց հետո՝ յոթնօրյա ժամկետում, առաջին ատյանի դատարանը կայացնում է որոշում հայցադիմումն ընդունելու, ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու մասին (ՔԴՕ 124-րդ հոդվ.), հակընդդեմ ապահովում պահանջելու վերաբերյալ միջնորդության քննության արդյունքներով դատական ակտը պետք է կայացվի միջնորդությունն ստանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում (ՔԴՕ 135-րդ հոդվ.), հաշտարարություն նշանակելու մասին որոշումը 10-օրյա ժամկետում ուղարկվում է գործին մասնակցող անձանց, վճռի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքը վերադարձնելու կամ ընդունումը մերժելու հիմքերի բացակայության դեպքում բողոք բերելու վերջնաժամկետը լրանալուց հետո՝ ոչ ուշ, քան գործը ստանալու պահից 15 օրվա ընթացքում, իսկ գործին մասնակից չդարձած անձանց կողմից բողոք ներկայացվելու դեպքում, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է դատական ակտ, գործն ստանալու պահից ոչ ուշ, քան 15 օրվա ընթացքում վերաքննիչ դատարանը կայացնում է վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում (ՔԴՕ 370-րդ հոդվ.) և այլն:
- **Գործին մասնակցող անձանց կողմից իրականացվող գործողութ-**

յունների համար անհրաժեշտ դատավարական ժամկետները սովորաբար սահմանվում են օրենքով, սակայն մի շարք դեպքերում դա կարող է անել նաև դատարանը, օրինակ՝ պատասխանողն իրավունք ունի հակընդդեմ հայց ներկայացնել ընդդեմ հայցվորի մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը (ՔԴՕ 140-րդ հոդվ.), հայցվորն իրավունք ունի ամբողջությամբ կամ մասնակիորեն հրաժարվել պահանջներից մինչև առաջին ատյանի դատարանի կողմից դատաքննությունն ավարտելը (ՔԴՕ 149-րդ հոդվ.) և այլն: Գործին մասնակցող անձանց համար դատավարական ժամկետ կարող է սահմանել նաև դատարանը, օրինակ՝ դատարանը կարող է պատասխանողի միջնորդությամբ երկարաձգել հայցադիմումի պատասխան ներկայացնելու ժամկետը (ՔԴՕ 139-րդ հոդված) և այլն:

- **Դատավարության այլ մասնակիցների համար դատավարական ժամկետները** կարող են սահմանվել թե՛ օրենքով և թե՛ դատարանի կողմից: Օրինակ՝ վկան պարտավոր է դատարանի կանչով ներկայանալ առաջին ատյանի դատարան (ՔԴՕ 69-րդ հոդված) և այլն:

«Դատավարական ժամկետ» հասկացությունը ներառում է ինչպես գործողության համար նախատեսված ժամանակահատվածը, այնպես էլ այն պահը, որի ընթացքում իրականացվում են դատավարական գործողություններ: Դատավարական ժամկետների ճիշտ հաշվարկը կարևոր նշանակություն ունի դրանց պատշաճ կիրառման համար: Դատավարական ժամկետների հաշվարկի ընդհանուր կանոնները նախատեսված են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով, որի 115-րդ հոդվածի համաձայն՝ դատավարական ժամկետները հաշվարկվում են տարիներով, ամիսներով, շաբաթներով և օրերով, ընդ որում օրերով հաշվարկվող ժամկետներում չեն ներառվում օրենսդրությամբ նախատեսված ոչ աշխատանքային օրերը:

Ժամկետների հաշվարկը որոշակի ժամանակահատվածի կամ այն պահի հստակ սահմանումն է, որի ընթացքում դատավարության մասնակիցը իրավունք ունի կամ պարտավոր է իրականացնել դատավարական գործողություններ:

Տարիներով, ամիսներով, շաբաթներով կամ օրերով հաշվարկվող դատավարական ժամկետների ընթացքը սկսվում է այն օրացույցային տարվա, ամսվա, շաբաթվա, ամսաթվի կամ անխուսափելիորեն վրա հասած իրադարձության հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը:

Առանձին դատավարական գործողությունների կատարման ժամկետները որոշվում են օրացուցային տարով, ամսով, շաբաթով, ամսաթվով կամ ժամանակահատվածով, որի ընթացքում դատավարական գործողությունը կարող է կատարվել:

Տարով են որոշվում, օրինակ, դատական վճիռները կատարման

ներկայացնելու ժամկետները (ԴԱՀԿ մասին օր. 23-րդ հոդված): Ամսով են որոշվում, օրինակ, ընդհանուր իրավասության դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու (ՀՀ ՔԴՕ 198-րդ հոդված), վերաքննիչ բողոք բերելու, մասնավորապես վճռի, ինչպես նաև գործի վարույթը կարճելու մասին որոշման, վճարման կարգադրության դեմ վերաքննիչ բողոք բերելու (ՀՀ ՔԴՕ 362-րդ հոդված) և այլն, ինչպես նաև վերաքննիչ դատարանի դատական ակտի դեմ վճռաբեկ բողոք բերելու (ՀՀ ՔԴՕ 391-րդ հոդված) ժամկետները: Շաբաթներով են որոշվում, օրինակ, վճարման կարգադրության՝ օրինական ուժի մեջ մտած վճռի ուժ ստանալու (ՀՀ ՔԴՕ 314-րդ հոդված) ժամկետը և այլն: Կոնկրետ ամիս-ամսաթվով կարող է որոշվել գործի քննությունը հետաձգելու դեպքում դատական նիստի ժամանակը (ՀՀ ՔԴՕ 156-րդ հոդված) և այլն:

Դատավարական ժամկետների ընթացքը սկսվում է այն օրացույցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ իրադարձությունն սկսվելու հաջորդ օրվանից, որոնցով որոշված է այդ սկիզբը. օրինակ՝ վճարման կարգադրությունը ստանում է օրինական ուժի մեջ մտած վճռի ուժ և ենթակա է հարկադիր կատարման 2 շաբաթվա ընթացքում պարտապանի կողմից վճարման կարգադրությունը ստանալու հաջորդ օրվանից, կամ վճռի բողոքարկման մեկամսյա ժամկետը սկսվում է վճիռը հրապարակելու հաջորդ օրվանից և այլն:

Եթե ժամկետները հաշվվում են տարով, ամսով, ապա դատավարական գործողությունները կարող են կատարվել սահմանված ողջ ժամանակահատվածում, այսինքն՝ ցանկացած օր, բայց ժամկետի օրվանից ոչ ուշ:

Դատավարական ժամկետներն ավարտելու կանոնները մանրամասն կարգավորված են ՔԴՕ 116-րդ հոդվածով: Ի դեպ, ի տարբերություն նախկին օրենսդրության, գործող օրենսդրությունը սահմանում է նաև շաբաթներով և օրերով հաշվարկվող դատավարական ժամկետների ավարտը, որոնք լրանում են՝ համապատասխանաբար սահմանված ժամկետի վերջին շաբաթվա համապատասխան օրը և այդ ժամկետի վերջին օրը:

Դատավարական ժամկետների համար կիրառվում է հետևյալ կարգը. տարիներով հաշվվող ժամկետը լրանում է սահմանված ժամկետի վերջին տարվա համապատասխան ամսին և ամսաթվին, իսկ ամիսներով հաշվվող ժամկետը՝ սահմանված ժամկետի վերջին ամսվա համապատասխան ամսաթվին: Եթե ամիսներով հաշվվող ժամկետի վերջը համընկնում է համապատասխան ամսաթիվ չունեցող ամսվան, ապա դատավարական ժամկետը լրանում է այդ ամսվա վերջին օրը (ՔԴՕ 116 հոդված): Այն դեպքում, երբ ժամկետի վերջին օրը ոչ աշխատանքային է, ժամկետի ավարտման օր է համարվում դրան հաջորդող

աշխատանքային օրը: Դատավարական գործողությունը կարող է կատարվել մինչև սահմանված ժամկետի վերջին օրվա ժամը 24-ը, իսկ եթե գործողությունը պետք է կատարվի դատարանում, այլ պետական մարմնում կամ կազմակերպությունում, ապա դատավարական ժամկետը լրանում է այն ժամին, երբ տվյալ դատարանում, այլ պետական մարմնում կամ կազմակերպությունում սահմանված կանոններով ավարտվում է աշխատանքային օրը:

Ուշագրավ է, որ ի տարբերություն ՀՀ նախկին ՔԴՕ-ի, գործող օրենսգիրքը օրերով հաշվարկվող ժամկետներում չի ներառել օրենսդրությամբ նախատեսված ոչ աշխատանքային օրերը: Նման նորմի ամրագրումով օրենսդիրը հստակեցրել է, որ ոչ աշխատանքային օրերը չեն ներառվում օրերով հաշվարկվող ժամկետներում:

Այսպես, տարիներով հաշվարկվող դատավարական ժամկետը լրանում է սահմանված ժամկետի վերջին տարվա համապատասխան ամսին և ամսաթվին: Օրինակ՝ մեկամյա ժամկետը, որը սկսվել է 2018 թ. հոկտեմբերի 15-ին, լրանում է 2019 թ. հոկտեմբերի 15-ին: Ամիսներով հաշվարկվող ժամկետը լրանում է սահմանված ժամկետի վերջին ամսվա համապատասխան ամսաթվին: Օրինակ՝ մեկամսյա ժամկետը, որի ընթացքը սկսվել է սեպտեմբերի 10-ին, լրանում է հոկտեմբերի 10-ին: Հնարավոր է նաև հաշվվող ժամկետի վերջը համընկնի այնպիսի ամսվա, որը համապատասխան ամսաթիվ չունի: Այս դեպքում ժամկետը լրանում է այդ ամսվա վերջին օրը: Օրինակ, եթե մեկամսյա ժամկետը սկսվում է հունվարի 31-ից, ապա այն պետք է լրանա փետրվարի 28-ին կամ 29-ին (նահանջ տարում):

Դատավարական ժամկետների խախտման (դրանք բաց թողնելու) դեպքում կարող են առաջանալ որոշակի իրավական հետևանքներ: Այսպես օրինակ՝ պատասխանողն իրավունք ունի մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը հակընդդեմ հայց ներկայացնել ընդդեմ հայցվորի: Եթե պատասխանողը չի օգտվում իր այդ իրավունքից, զրկվում է հետագայում այնպիսի հայց ներկայացնելու հնարավորությունից, որը կարող էր ամբողջությամբ կամ մասնակիորեն բացառել սկզբնական հայցի բավարարումը, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է հակընդդեմ հայց ներկայացնելու անհնարինությունը՝ իրենից անկախ պատճառներով (ՔԴՕ 140-րդ հոդվածի 4-րդ մաս), ինչպես նաև՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու ժամկետը լրանալուց հետո եզրափակիչ դատական ակտը մտնում է օրինական ուժի մեջ (ՔԴՕ 362 և 391 հոդվածներ) և այլն:

Բանալի բառեր - *դատարան, դատավարական ժամկետ, ողջամիտ ժամկետ, Եվրոպական դատարան, ժամանակահատված, դատավարական գործողություն, դատավարական ժամկետների հաշվարկ*

ВАРДУШ ЕСАЯН – ***Общая правовая характеристика и исчисление процессуальных сроков в гражданском процессе.*** – В статье рассмотрены общая характеристика сроков гражданского судопроизводства, их понятие, виды и порядок исчисления. Указаны сроки исполнения отдельных юридических действий, т. е. сроки, в течение которых они могут быть совершены.

Помимо того, проанализированы и представлены как внутренние законодательные нормы, так и ряд прецедентных решений по данной теме.

Ключевые слова: *суд, процессуальный срок, разумный срок, Европейский суд, судебное разбирательство, исчисление срока судебного разбирательства*

VARDUSH YESAYAN – ***General Legal Description and Calculation of Procedural Time Limits in Civil Proceedings.*** – General description, concept, types and calculation of procedural time limits are discussed within the framework of the presented article. The time limits for the execution of specific legal actions, during which a judicial action can be performed, are indicated.

Both the national legislative norms and a number of precedential decisions on the topic of interest have been analyzed and presented in the article.

Key words: *court, time limit, probation period, reasonable time, European court, trial, calculation of the trial time limits*

Ներկայացվել է՝ 23.10.2020,
Գրախոսվել է՝ 03.11.2020,
Ընդունվել է տպագրության՝ 18.12.2020